

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 43/3

30 հոկտեմբերի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ Ռիտա Թովմասովայի 06.10.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 25.09.2015 թ-ի թիվ 145/05 որոշման դեմ:

Ա/Ձ Ռիտա Թովմասովայի գանգատում բերված փաստարկները.

Սույն թվականի սեպտեմբերի 30-ին Ա/Ձ Ռիտա Թովմասովան (այսուհետ նաև գանգատաբեր) փոստով ստացել է ՀՀ Ֆինանսների նախարարության իրավաբանական վարչության պետի կողմից 25.09.2015 թ-ին կայացրած թիվ 145/05 որոշումը (այսուհետ՝ Որոշում) Ա/Ձ Ռիտա Թովմասովայից 340,000 ՀՀ դրամ գանձելու մասին:

Գանգատաբերը նշում է, որ Որոշումն իր համար անակնկալ էր՝ իր շարադրանքով և պահանջով: Նախ Որոշման պարզաբանման մասում նշված է, որ ուսումնասիրելով Ա/Ձ Ռիտա Թովմասովային վերաբերող վարույթի նյութերը պարզել է, որ 25.09.15 թ-ի դրությամբ նրա չկատարած պարտավորությունը կազմում է 340,000 ՀՀ դրամ: Չնայած, որ Որոշման մեջ չի նշվում, թե ում նկատմամբ է այդ չկատարած պարտավորությունը: Հետագա տեքստի համաձայն այդ պարտավորությունն առաջացել է թվով երկու ՀԴՄ իրավախախտման վերաբերյալ ակտերով: Ըստ այդմ, առաջինը նշված է թիվ 2316038 ԱԿՏ-ը, որը կազմվել է (Որոշման մեջ նորից չի նշվում, թե որ ՏՀՏ-ի կողմից), 20.08.2008թ-ին, իսկ երկրորդը՝ թիվ 6104023 ԱԿՏ-ն է, որը կազմվել է 19.03.2015թ-ին:

Ա/Ձ Ռիտա Թովմասովան պարզաբանում է, որ Որոշման մեջ հիշատակված առաջին թիվ 2316038 ԱԿՏ-ի մասին տեղյակ է և ժամանակին կատարել է վճարումները, որոնց վճարման կտրոնների պատճենները կցված են սույն դիմումին: Բացի այդ, իր համար անհասկանալի է, թե ինչ հիմքով է ՀՀ Ֆինանսների նախարարության իրավաբանական վարչության պետը 25.09.2015 թ-ին ներկայացնում բռնագանձման և հարկադիր կատարման որոշում 2008 թ-ի վարչական ԱԿՏ-ի մասով, եթե նույն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված է՝ (...Դրամական պահանջները ներկայացվում են հարկադիր կատարման սույն օրենքին համապատասխան՝ վարչական ակտն անբողոքարկելի դառնալուց հետո՝ եռամսյա ժամկետում ...): Այսինքն ակնհայտ է, որ վարչական մարմինը արդեն բաց է թողել 2008 թ-ի ԱԿՏ-ի հարկադիր կատարման ժամկետը:

Ինչ վերաբերում է Որոշման մեջ հիշատակված թվով երկրորդ, գանգատաբերի համար լրիվ անձանոթ թիվ 6104023 առ 19.03.15 թ-ին կազմված ԱԿՏ-ին, ապա հայտնում է, որ իր նկատմամբ նմանատիպ ԱԿՏ չի կազմվել: Ավելին, եթե նույնիսկ կազմվել է առանց իր մասնակցության, ապա գանգատաբերն իրազեկված և տեղյակ չէ թիվ 6104023 ԱԿՏ-ն ինչի մասին է, և ում մասին: Հետևաբար, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի՝ Գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող

օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ: Այսինքն, վերոհիշյալ թիվ 6104023 ԱԿՏ-ը չի կարող ուժի մեջ լինել, քանի դեռ կողմը իրազեկված չէ:

Ելնելով վերոգրյալից և առաջնորդվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով, գանգատաբերը խնդրում է վերադասության կարգով քննության առնել գանգատը և անվավեր ճանաչել ՀՀ ֆինանսների նախարարության իրավաբանական վարչության պետի 25.09.2015 թ-ի թիվ 145/05 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննարկելով Ա/Ձ Ռիտա Թովմասովայի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 25.09.2015 թ-ի դրությամբ նրա չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 340.000 դրամ: Նշված պարտավորությունն առաջացել է 20.08.2008 թ-ի թիվ 2316038 և 19.03.2015 թ-ի թիվ 6104023 ՀԴՄ իրավախախտման վերաբերյալ ակտերով:

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 25.09.2015 թ-ին ընդունվել է թիվ 145/05 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Ա/Ձ Ռիտա Թովմասովայից 340.000 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Տվյալ դեպքում ՀՀ ԿԱ ՀՊԾ Արարատի ՏՀՏ 20.08.2008 թ-ի թիվ 2316038 ակտով Ա/Ձ Ռիտա Թովմասովայի կողմից ՀԴՄ շահագործման կանոնների խախտում թույլ տալու համար լրացուցիչ գանձման է առաջադրվել 75.000 դրամ տուգանք, որը սահմանված ժամկետում չվճարելու համար կրկնապատկվել է և կազմել 150.000 դրամ:

Նշված 150.000 դրամ գումարից Ա/Ձ Ռիտա Թովմասովայի կողմից վճարվել է միայն 110.000 դրամը, իսկ մնացած 40.000 դրամը մինչ օրս չի վճարվել: Նշված փաստը հաստատվում է գործում առկա համապատասխան վճարման անդորրագրերով:

Որոշմամբ գանձման առաջադրված պարտավորության մնացած մասը՝ գումարով 300.000 դրամ, առաջադրվել է ՀՀ ՖՆ Արտաշատի ՏՀՏ 19.03.2015 թ-ի թիվ 6104023 ակտով: Նշված ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ հարկային տեսուչներ Ծերուն Ռուստամյանի և Անդրանիկ Կիրակոսյանի կողմից 11.03.2015 թ-ին ժամը 12:22-ին ք.Վեդի, Արարատյան 45/3 հասցեում գտնվող առևտրի օբյեկտից կատարվել է հսկիչ գնում 250 դրամի չափով (1 տուփ պլաստիլին), որի դիմաց կանխիկ վճարված գումարը Ա/Ձ Ռիտա Թովմասովայի կողմից չի մուտքագրվել ՀԴՄ և չի տրամադրվել համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն: Արդյունքում կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված տուգանքը՝ գումարով 150.000 դրամ: Նշված գումարը ՀՀ

օրենսդրությամբ նախատեսված երկամսյա ժամկետում չվճարելու համար՝ կրկնապատկվել է:

Ինչ վերաբերվում է Ա/Ձ Ռիտա Թովմասովայի պնդումներին, որ նա երբևէ տեղեկացված չի եղել ՀՀ ՖՆ Արտաշատի ՏՀՏ 19.03.2015 թ-ի թիվ 6104023 ակտի կազմման մասին, ապա այս կապակցությամբ հարկ է նշել հետևյալը:

ՀՀ ՖՆ Արտաշատի ՏՀՏ պետի 06.03.2015 թ-ի թիվ 6104023 հանձնարարագրի հիման վրա Ա/Ձ Ռիտա Թովմասովայի մոտ կատարված հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգման արդյունքում 11.03.2015 թ-ին կազմվել է թիվ 6104023 ակտի նախագիծը, որը 12.03.2015 թ-ին փոստային ծառայության միջոցով ուղարկվել է Ա/Ձ Ռիտա Թովմասովային ք.Վեդի, Արարատյան 41 հասցեով: Սակայն, ծրարը փոստային ծառայության կողմից հետ է վերադարձվել՝ «Մերժված» նշագրմամբ: Այնուհետև, 19.03.2015 թ-ին կազմվել է ՀՀ ՖՆ Արտաշատի ՏՀՏ թիվ 6104023 ակտը, որի օրինակը նույնպես փոստային ծառայության միջոցով ուղարկվել է Ա/Ձ Ռիտա Թովմասովային նույն հասցեով: Սակայն, ծրարը փոստային ծառայության կողմից կրկին անգամ հետ է վերադարձվել՝ «Մերժված» նշագրմամբ: Գործում առկա են նշված փաստերը հիմնավորող բոլոր ապացույցները (փոստային ծառայության կտրոնները): Այսինքն, հարկային մարմնի կողմից ձեռնարկված բոլոր փորձերը ՀՀ ՖՆ Արտաշատի ՏՀՏ թիվ 6104023 ակտի նախագծի և ակտի օրինակները Ա/Ձ Ռիտա Թովմասովային հանձնելու ուղղությամբ, վերջինիս կողմից մերժվել են:

Ելնելով վերոգրյալ փաստական հանգամանքներից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 25.09.2015 թ-ի թիվ 145/05 որոշմամբ պարտավորությունները գանձման են առաջադրվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, հետևապես Որոշումը հիմնավոր է և ենթակա է կատարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 25.09.2015 թ-ի թիվ 145/05 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ